№ 156 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26 1899 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26 № 156

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօնի օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր, Արշակ, Յակոբ և Աննա Ստեփանեանցները ու Նատալիա Սափարեանցը, սրտի խորը կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջին երեքը՝ իրանց թանգագին մօր, չորրորդը՝ սկեսրոջ և վերջինն իր բազմերախտ տալի

ՍՕՖԻԱ ԲԱԼԱԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի առաւօտը, ամսիս 22-ին: Թաղման յուղարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի օր, առաւօտեան ժամի 10-ին իր բնակարանից, որ գտնվում է Գանովսկայա փողոցում, տ. № 22, դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ այդտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: Ամբիծքը—երեքշաբթի և չորեքշաբթի երեկոները ժամի 7-ին:

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արժանի են պաշտպանութեան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Կօջօրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դերասան թէ խաչագող.

ԱՐԺԱՆԻ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Մի քանի անգամ մեր լրագրի մէջ մենք յիշատակել ենք այս և այն մասնաւոր գիւտերի մասին, որ արել են զանազան անձինք մեքենագործութեան և ուրիշ արհեստների մէջ: Այդպիսի գիւտեր յայտնի են Բագւում նաւթագործութեան վերաբերեալ, այդպիսի մի քանի գիւտեր տեղի են ունեցել Երևանեան և միւս նահանգներում գիւղատնտեսական գործիքների վերաբերութեամբ: Նորերս Երևանում փորձի ենթարկվեց մի նոր հնարված կալսելու մեքենայ, որ ունի այն առաւելութիւնը եւրոպական նոյնատեսակ մեքենաների վրա, որ զատելով հացահատիկը՝ տալիս է դարման, մինչդեռ եւրոպական մեքենաները դուրս են բերում յարդը ամբողջ, առանց նրան մանրացնելու:

Այդ գիւտերը շատ անգամ, ուշադրութեան չարժանանալով և ոչ մի խրախոյս չը գտնելով որ և է կողմից՝ կորչում են գնում, յուսահատութեան մէջ գցելով հնարողներին և նրանց յետ կանգնեցնելով զանազան կատարելագործութիւնների մասին մտածելու ցանկութիւնից: Մինչդեռ այդ գիւտերի մէջ կարող են լինել, և կան անշուշտ, այնպիսիները, որոնք պաշտպանութեան և խրախոյսի կատարեալ իրաւունք պէտք է վայելէին: Եթէ, օրինակի համար, ծղղվէր կալսելու մեքենայի վերև յիշած կատարելագործութեան մասին լուրը՝ այն ժամանակ Անդրկովկասի գիւղատնտեսները կարող կը լինէին նոյնպէս սկսել կալսելու մեքենաներ գործածել, որոնք մինչև այժմ մուտք չեն գործում հէնց այն պատճառով, որ նրանք չեն ջարդում և մանրացնում յարդը, այլ դուրս են բերում նրան ամբողջ ծղօտներով:

Գիւտ անողներին պէտք է աջակցել, թէ՛ կազմակերպելով փորձեր նպաստաւոր պայմաններում և թէ օժանդակութիւն տալով, որ կատարելագործութեան թերութիւնները լրացվեն, եթէ, ի հարկէ, այդ թերութիւնները համեմատաբար աննշան են և հեշտ ուղղելի: Աջակցութեան և նպաստի բացակայութիւնը ոչ միայն մեզանում, այլ և Ռուսաստանի ներքին նահանգներում, խեղդել է նախաձեռնութեան ոգին և յետ գցել շատ կատարելագործութիւններ, որ յետոյ երևացել են ուրիշ տեղում և ուրիշ ձևով:

Գիւտ անողներին օգնութիւն տալու հարցը յարուցվել է մի քանի անգամ մայրաքաղաքներում և դարձեալ քնել: Այժմ նորից նա հրապարակ է եկել և պաշտպանութիւն է գտնում շատ կողմերից: Նոյն իսկ միտք է ծագել կազմելու մի յատուկ ընկերութիւն, որի նպատակը պէտք է լինի խրախուսել և օգնել գիւտ անողներին: Ցանկալի է, որ գոնէ այս անգամ յարուցված հարցի մշակութիւնը արգելքի չը հանդիպէր և նա ստանար օրինական բաւարար լուծում, ստեղծելով այդպիսով կատարելագործութեան մասին մտածողների և նրան իրագործողների համար դիւրացրած պայմաններ և ջերմ պաշտպանութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Տենդային կատաղի իրարանցումից յետոյ Բագւում սկսվեց յուսաթափութեան, կսկիծների շրջանը: Մեր թղթակիցը արդէն հաղորդել է, որ այնքան ոգևորութիւնների, այնքան առասպելական աջողութիւնների ասպարէզ դարձած Բագուն մտնում է ճգնաժամի մէջ: Փող չը կայ—ահա այն աղաղակը, որ այժմ բարձրանում է նաւթային մայրաքաղաքում, այն իսկ տեղը, ուր մի քանի ամիս առաջ մի օրում, մի քանի ժամերի ընթացքում, տասնեակ հազարներ աշխատելը շատ սովորական բան էր դառել: Մարդկային բաղդի փոփոխութիւն... Ի՜նչպէս ճակատագիրը ծաղրել գիտէ այն միամիտներին, որոնք հարստութիւն և փարթամութիւն վայելելու համար ոտի տակ տրորում են մարդկային բոլոր զգացմունքները: Այժմ ճգնաժամն է. մենք չարախնդութեամբ չենք արձանագրում այս իրողութիւնը, մանաւանդ որ վնասվողները լինելու են Բագուի միլիօնատիրական տենդերով վարակված մանր արդիւնագործները և հասարակ աշխատաւորները: «Каспій» լրագրի լրատուն տեսակցութիւն է ունեցել մի «լաւատեղեակ» անձի հետ, որ հաստատել է, թէ ճգնաժամը, այո, վերահաս է և մի քանի ֆիրմաներ շուտով սնանկ կը յայտարարվեն: Առհասարակ ովքեր կը լինեն վնասվողները: Բանկերը, մասնաւոր փոխատուները առատ հունձ կունենան, գործատէրերը մի կերպ դուրս կը գան դժուարութիւնից: Բայց պէտք է որ վնասվողներ էլ լինեն:

Վնասվողները կը լինեն ընկերութիւնների բաժնետէրերը և ակցիոներները. կը վնասվեն նոյնպէս բանւորները, ծառայողները, եթէ անզգուշութեամբ գործատէրերի վրա կը թողնեն մի քանի ամիսների ռոճիկները՝ ինչպէս այդ գործադրվում է այժմ մանր նաւթահանքերում:

Շատ գործարաններ և առևտրական ձեռնարկութիւններ այժմ իսկ հոգեվարքի մէջ են. նրանք, ի հարկէ, վերջին շունչը կը տան, իսկ ընդհանուր ճգնաժամը կատարեալ կը լինի մի քանի ամսից յետոյ: Գլխաւոր պատճառն այն է, որ փող չը կայ: Վերջին տարիներում Բագու էին թափվում բազմաթիւ միլիօններ. բայց դրանք չը մնացին բագուեցիների ձեռքում. ընդհակառակը, աւելի ևս գրգռեցին նրանց ախորժակը, հարկադրեցին աւելի մեծ ձեռնարկութիւնների ետևից վազել: Այդպիսով առաջացաւ ներկայ դրութիւնը, որ առջևում ոչ մի մխիթարական հանգամանք չէ ցոյց տալիս: Դա էլ Անդրկովկասի բաղդից էր, կասենք մենք: Բագւում ճգնաժամը գալիս է գործերը պակասեցնելու և գործաւորների թիւը կարճելու այնպիսի ժամանակ, երբ Անդրկովկասը, վատ հունձի պատճառով, տնտեսական ծանր տագնապի մէջ է մտնում: Անբերրիութեան զոհերի մի մասը գոնէ կարող էր աշխատանք գտնել նաւթային հանքերում, բայց այդ յոյսը այժմ կարող է ոչնչանալ, քանի որ նաւթային աշխարհն էլ, ինչպէս գուշակում են լաւատեղեակները՝ պիտի նոյնպէս տառապի իր տեսակի մի անբերրիութիւնից...

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԵՐԱՍԱ՞Ն ԹԷ ԽԱՉԱԳՈՂ

—

Զարմանքով կարդացի «Տարազի» մէջ հրատարակված յօդուած մը, որով պ. Յովհաննէս Թումանեանց կը փորձէ պաշտպանել Գալֆայեան խաչագողը: Պ. Թումանեանց «դերասանի», «արուեստի», «թատրոնի» խօսք կընէ տակաւին, մինչդեռ Գալֆայեանին պարագան ուրիշ բան չէ, բայց եթէ գռեհիկ անբարոյականութեան պատմութիւն մը: Պ. Թումանեանց հակասութիւն կը կարծէ գտնել այն զայրոյթի էջին մէջ («Անահիտ» թիւ 7) այնպէս, ինչպէս որ պատշաճ էր: «Ասում էք՝ սիրուն գլուխ մը ունէր, կը գրէ. մինթէ կարծում էք ամեն մի սիրուն գլուխ ունեցող երկարատև աշխատութեամբ մը կարող է ողբերգու դերասան դառնալ»: Կամ այն է որ պ. Թումանեանց կարդալ չի գիտեր, կամ իր ալ սովորութիւնն է, ինչպէս մյնքան ուրիշներունը մեր մէջ, խեղաթիւրել գրուածք մը, անոր մէջէն իր ուզած եզրակացութիւնը հանելու համար: Ես գրած եմ. «Այդ պարոնը արտայայտիչ ու գեղեցիկ գլուխ մը ունէր, առջի օրերուն ցոյց կուտար մեծ խանդ մը աշխատելու և զարգանալու, և այլն»:

Եւ այս առիթով կուզեմ ամեն մանրամասնութիւններով բացատրել այդ պարոնին պատմութիւնը, պատմութիւն մը, որ կեանքիս ամենէն կսկծալի յուսախաբութիւններէն մէկը եղած է: Թիֆլիսէն Բարիզ գալուն, Գալֆայեան ուղղակի իմ բնակած պանդոկս իջաւ. ինծի յանձնարարված էր. իր ճապուկ ու սիրուն դիմագծութիւնը աչս գրաւեց. շատ խոնարհ էր, աշխատելու սաստիկ փափագող կերևար. կըսէր թէ իր նպատակն է Թիֆլիսի բեմին համար պատրաստվիլ, իր երազն էր «երկրորդ Ադամեան մը» ըլլալ: Ի՞նչպէս չը համակրէի իրեն. մեծ խանդաղատանքով ընդունեցայ զինքը, ո և է օգնութիւն, ո և է քաջալերութիւն չը զլացայ իրեն. գծեցի իրեն ծրագիր մը, որուն համեմատ պէտք է աշխատէր: Ճշմարիտ է որ առաջին օրէն իր վրա նշմարեցի մէկ քանի կարևոր թերութիւններ. յիշողութեան ծայրայեղ տկարութիւն (շաբաթ մը Բարիզ մնալէ յետոյ իր բնակած փողոցին անունը դեռ չէր կարող միտքը պահել!), չափազանց յոռի արտասանութիւն (պարզ խօսակցութեան ատեն անգամ կարելի չէր բառերը որոշ լսել իր բերնին մէջ), և ընդհանուր զարգացման բացարձակ պակաս. բառ մը ֆրանսերէն չէր գիտեր. շատ քիչ կը ճանչնար իր մայրենի լեզուն. ո և է պատմական, գեղարուեստական կամ գրական հմտութենէ զուրկ էր. օրին մէկը Ադամեանի կենսագրութիւնը կարդացած էր և ուզում էր Ադամեան մի ըլլալ. մյդչափ: Բարեկամներէս շատերը զինքը ապուշի մը տեղ դրին, որովհետև տարօրինակ ձևեր ունէր, և դիմացը եղողին առջև, ո և է տեղ, յանկարծ Օթելլօ կը դառնար ու յիմարական ծամածռութիւններով իր կնիկը խեղդելու տեսարանը կը պատկերացնէր: Այս բոլոր թերութիւններուն հակառակ, ես յամառեցայ հաւատալ որ այդ տղան, չարաչար ու երկարատև աշխատութեամբ, պիտի կրնար իր թերութիւնները սրբագրել և ըլլալ ոչ թէ Ադամեան մը (այդպիսի բան մը երբէք մտքէս չեմ անցուցած), այլ «պատրաստված» դերասան մը: Իր մտաւոր տկարութիւնները կը վերագրէի թշուառութեան մէջ մաշած կեանքի մը (իր ըսածին նայելով), և կերևակայէի որ կանոնաւոր կեանքով մը այդ բոլորը պիտի կարենային բուժվիլ և իմացականութիւնը իր բնական վիճակը պիտի ստանար:

Եւ իրօք, Գալֆայեան սկսաւ ճիգեր ընել ֆրանսերէն սորվելու, կօնսերվատուարը գնաց, և ինծի կըսէր թէ այնտեղ դասերու կը հետևէր, կարելի եղածին չափ ջանալով օգտվիլ անոնցմէ. յաջողեր էր Սիլվէնին համակրութիւնը շահել, որ նոյն իսկ թղթով մը վկայեց թէ «Գալֆայեան ունէր այն բնական ձիրքերը որով կը կազմվին ողբերգուները»: Սիլվէն այդ բանը կըսէր՝ ակնարկելով Գալֆայեանի միմիքին ու ցուցուցած խանդավառութեանը: Անոնք յոյսերս ամրապնդեցին: Եւ կը յիշեմ որ երբ «Արձագանքին» մէջ հրատարակված ուռուցիկ գովեստի մը իբր պատասխան Գալֆայեանին դէմ «Մշակին» մէջ կծու յօդուած մը երևցաւ, ես երկտող մը ղրկեցի «Մշակին», որով Սիլվէնի վկայութիւնը կը յիշէի և կըսէի թէ «Գալֆայեան երբէք չունի այն յաւակնութիւնները զոր իրեն կը վերագրեն, թէ ան ինքզինքը կը նկատէ ուսանող մը, և թէ, իր նպատակն ըլլալով աշխատիլ ու կազմվիլ՝ արժանի է քաջալերվելու»:

Խաբուեր եմ եղեր: Քիչ ատենէն Գալֆայեան ծանօթութիւն հաստատեց խել մը բարիզցի հայ ընտանիքներու հետ, որոնց սկսաւ ինքզինքը ծախել «իբր արդէն կազմված արուեստագէտ մը». կը գիտէի որ լրջօրէն աշխատելու ձև չունէր. ո և է յառաջդիմութիւն չէր ըներ ֆրանսերէնի մէջ. կը շարունակէր չափազանց գէշ արտասանել հայերէնը. և, հինգ-վեց ամսէ ի վեր որ Բարիզ կը գտնուէր՝ դեռ ո և է ոտանաւոր մը, հատուած մը գոց չէր ըրած. իր բոլոր գոց գիտցածը երկու երեք կտորէ կը բաղկանար, Պետրոս Դուրեանի Տրտունջքը (այն ալ միմիայն առաջին տասը տողերը), Համլէթի մէկ մենախօսութիւնը (կիսկատար), Օթելլոյէն վեց տող, և Լիրէն չորս տող. մյսչափ: Բոլոր ջանքերս անզօր մնացին զինքը համոզելու որ կտոր մը կանոնաւորապէս սորվի. ամեն գացած տեղերը այդ չորս-հինգ կտոր-փրթուճ հատուածները կարտասանէր, և ատով «նոր Ադամեանի» համբաւ մը շինեց մեր Բարիզի հայ գաղթականութեան կարգ մը չը տեսներուն համար. Բարիզի հայոց կողմէ կազմակերպված բարեգործական երեկոյթի մը մէջ, առաջին անգամ ըլլալով բեմ ելաւ և արտասանեց Դուրեանի «Սև Հողեր» թատերգութեան յաւելուածէն մաս մը. երեկոյթէն յետոյ կարծիքս հարցուց իր խաղացուածքին վրա. խակոյն իրեն ըսի թէ «չափազանց գէշ էր». գոց չէր սորված (յուշարարին ըսածը կը կրկնէր բառ առ բառ), ձևերը այլանդակ, անվարժ, ծիծաղելի էին. հանդիսականները խնդալէն մարեցան, և սակայն դարձեալ մեծաշուինդ ծափերով ողջունեցին այս խակ ու անկազմ սկզբնաւորութիւնը: Եւ թերևս վայրկեան մի Գալֆայեան կարծեց որ իրօք ալ կազմված արուեստագէտ մըն է: Այլ ևս դադրեցաւ քօնսեռվաթուառ երթալէ, նոյն իսկ չէր հաներ ֆրանսացի արուեստագէտներուն: Ինքզինքը Ադամեանէն շատ բարձր կը կարծէր: Բարիզցի հայ մը ելաւ Պօլսոյ «Մասիսին» մէջ գրեց, թէ Գալֆայեան «հայ Մունէ-Սիւլլի» մըն է (!): Գալֆայեան ինքզինքը Մունէ-Սիւլլիէն ալ բարձր երևակայեց: Եւ կարծեմ այդ ատենն է որ սկսած ըլլալու է ֆրանսացիներուն ինքզինքը ներկայացնել իբր «երևելի հայ արուեստագէտ մը»: Բարիզեան մէկ երկու գրական ու երաժշտական երեկոյթներու մէջ Համլէթի «Լինել թէ չը լինել» մենախօսութիւնը արտասանեց «իբր հայ արուեստագէտ»:

Մէկ քանի ֆրանսական լրագիրներու մէջ գովեստի տողեր երևցան իր մասին. պ. Թումանեանց այդ գովեստները մեր երեսին կը զարնէ. և սակայն շատ դիւրին է զանոնք բացատրել. այդ գովեստները գրողները եղած են անծանօթ reporter-ներ, որոնք չեն ստորագրած. քննադատական որ և է նշանակութիւն չունեցող պարզ լրաբերներ, որոնք, տեսնելով օտար մը, «հայ» մը, (հայերուն համար ցաւակցական հա-

Դարձեալ մի գիծ Սուվորինների և նրանց նմանների «հայրենասիրութիւնից»: Անցեալներում «Новое Время» լրագրի մէջ ոմն պ. Գորլով պատմում էր, թէ ինքը տեսակցութիւն է ունեցել մի ամերիկացու հետ, որ բաւական տեղեակ է աշխարհի գործերին և Միացեալ-Նահանգներում նահանգապետի պաշտօն է վարել: Այդ լուսաւորված եանկին խօսել է Ռուսաստանի ներքին գործերի մասին և ճիշդ ու ճիշդ այն կարծիքներն ու հայեացքներն է արտայայտել, որոնք Սուվորինի և նմանների «մեծ հայրենասիրութեան» նշաններն են համարվում: Այսպէս, ամերիկացին ասել է, որ Ռուսաստանը դպրոցական գործում «վերամբարձ», բայց կեղծ հումանիտար-փիլիսոփայական նշանագրի տակ ներկայացնում է մի այնպիսի ազատութիւն, որ, իսկապէս, մի հակապետական անիշխանութիւն է, կործանարար պետութեան համար»: Առաջ տանելով իր խօսքը, եանկին ասել է, որ ամերիկական տեսակէտից այլազգի դպրոցներ չը պիտի լինեն Ռուսաստանում. որ ռուսաց պատմութիւնը միայն բարձրագոյն դպրոցներում, միայն գիտական շրջաններում պիտի ենթարկվի քննադատութեան, իսկ միւս տեղերում նա պիտի ընդունվի առանց որ և է կրիտիկայի. որ պէտք է «հերոսներ ստեղծել» և նկարագրել նրանց «առանց բծերի»: Մի խօսքով, այդ եանկին ոտով գլխով մի Սուվորին էր Միսսիսիպիի կամ Արկանզասի ափերից: Եւ որովհետև Սուվորինները այնպիսի պտուղներ չեն, որոնք բուսնում են աշխարհի բոլոր կողմերում և աշխարհագրական—քաղաքակրթական բոլոր դիրքերի վրա, ուստի ճիշդ կարելի էր ենթադրել, որ ամերիկացի—Սուվորինը առասպել է: Այդպէս էլ վերաբերվում է այդ «տեսակցութեան» ռուս լրագիրներից մէկը, «Новое Обозрѣніе»:

Ոչ մի ամերիկացու հետ—ասում է նա—պ. Գորլով, ի հարկէ, չէ խօսել: Երբէք ամերիկացին, այնպիսի երկրի մի բնակիչ, ուր ամեն մէկը կարող է ստեղծել իր ցանկացած լեզուն, իր ցանկացած կրօնը, կառուցանել իր ցանկացած դպրոցները և աւանդել նրանց մէջ ինչ կամենում է և ինչպէս կամենում է,—այդպիսի խորհուրդներ չէր տայ և չէր կարող տալ: Պարզապէս, պ. Գորլով կամեցել է իր սրտում եղածը դուրս թափել, բայց վախեցել է, և աղբի արկղից հանել է ծիծաղելի եանկիի խզբզած գծագրութիւնը: Բայց արդեօք մտածել է պ. Գորլով, թէ ինչպէս խայտառակում է իր երկիրը, առաջարկելով որ դպրոցներում, հայրենասիրութիւնը բարձրացնելու համար, կեղծեն պատմութիւնը:

Օտարոտի հարց. կարծես Գորլովները, Սուվորինները ամեն օր չեն կեղծում պատմութիւնը, չեն խեղաթիւրում այն իրողութիւնները, որոնք կատարվում են հազարաւոր մարդկանց աչքի առաջ: Ապացոյց, հէնց այդ առասպելական եանկին, որ Ամերիկայից եկել է խարդախողների հայրենասիրութիւնը երկինք բարձրացնելու համար. չէ՞ որ դա մի լաւ միջոց է ընթերցողներին խաբելու համար. չէ՞ որ խեղճ ընթերցողը, կարդալով այդ խարդախած տեսակցութիւնը, պիտի գայ այն եզրակացութեան, թէ Սուվորինի հայրենասիրութիւնը այնքան «ամբիծ և աշխարհաշէն» է, որ նոյն իսկ Էդիսոնի հայրենակիցների նախանձն է շարժում: «Հերոսներ ստեղծելու» դէմ է բողոքում լրագիրը, իբրև երկիրը խայտառակող մի խարդախութեան դէմ: Բայց հերոսներ հէնց այժմ էլ ստեղծվում են, եթէ ոչ պատմական ազգային հերոսներ, գոնէ ներկայ կեանքի, իրականութեան հերոսներ: Նայեցէք այդ Գորլովներին, Գրինգմուտներին, Կոմարովներին, Սուվորիններին. պակաս հերոսներ են նրանք, պակաս կեղծումներով են նրանք «մեծ հայրենասէրների» չպարը քսում իրանց պատուական դէմքերին և հասնում են աշխարհիկ բարեկեցութեան գագաթներին անգամ...

ՆԱՄԱԿ ԿՈՋՈՐԻՑ

Օգոստոսի 22-ին

Եթէ ուզում էք իմանալ, ինչ է Թիֆլիսեցի հայը, եթէ ուզում էք ուսումնասիրել նրա սովորութիւններն ու բարքը, կամ մի թեթև հասկացողութիւն կազմել նրա մտաւոր կեանքի և աշխարհայեցողութեան մասին, եթէ, վերջապէս, հետաքրքրվում էք նրա կուլտուրական զարգացման աստիճանով՝ բարձրացէք, ընթերցող, ամառային մի գեղեցիկ օր, Թիֆլիսից դէպի արեւմտեան բարձրաւանդակը տանող խճուղիով. երկու ժամից յետոյ կառքը ձեզ կը բերէ բարձրաւանդակի գագաթը, ուր դուք կը տեսնէք ցիր ու ցան ընկած փայտեայ տներ, դուքէ և պալատներ—դա Կօջորն է:

Խօսել Կօջորի բնութեան որ և է առաւելութիւնների կամ վայելչութիւնների մասին չարժէ. միատեսակ բուսականութեան ներկայութիւնը և համեմատաբար հով կլիման բաւական են, որպէս զի Կօջորը գերադասվի Թիֆլիսից: Ամենագլխաւորը ջուրն է, որի մէջ Կօջորը շատ մեծ կարօտութիւն ունի:

Մնում է հարցնել, ինչ կեանք է վարում այստեղ Թիֆլիսի բուրժուան ամառվայ երկու ամսվայ ընթացքում: Ստիպված ենք պատասխանել այս հարցին մեր հայի համար շատ աննպաստ կերպով: Առևտուր և թղթախաղ—ահա այն երկու բևեռը, որոնց մէջ ամուր սեղմված է հայ բուրժուան: Քաղաքում (Թիֆլիսում) նա շաբաթվայ վեց օրը զբաղված է իր «գէշէֆթներով», իսկ եօթներորդ օրը նա Կօջոր է շտապում—առևտրից ազատվելով թղթախաղի գիրկն է նետվում կամ անհամ ու անճաշակ զրոյցներով ժամեր սպանում: Իսկ նրա ընտանիքը: Ո՜վ ողորմած Տէր, ինչպէս նրանց անուանել, ինչ ազգի զաւակ նրանց համարել. իզուր կը լինի իմանալ այդ:

Մենք անուանում ենք մեզ առաջադէմ, կուլտուրական ազգ, բայց մեզ թւում է, որ այդ բոլորը դեռ վաղ է ասել Թիֆլիսեցու վերաբերմամբ: Եւրոպական կուլտուրան մենք իւրացրել ենք միայն արտաքուստ: Եւրոպական մօդան և փարթամութիւնը մեզ ողողել են, բայց մեր մէջ չէ թափանցում այն կենսունակ կայծը, որ եւրոպական միտք է կոչվում և որին պարտական է համաշխարհային քաղաքակրթութիւնը իր ներկայ փառաւոր դրութեամբ: Մի կողմից մենք եւրոպացի ենք մեր արտաքին փայլով, միւս կողմից՝ դեռ ծածկված ենք ասիական թմրութեան ժանգով: Պէտք է ցանկալ, որպէս զի մեր առաջ շուտով հարթվի գիտակցական կուլտուրայի ճանապարհը և մենք դուրս գանք այս անախանձելի վիճակից:

Վերև յիշեցի, որ մենք առևտրի հարազատ ճորտեր ենք. պէտք է աւելացնել դրան, որ այդ ախտը մեզ վարակում է ծայրայեղ չափերով. նա իր համար ասպարէզ է գտնում նաև եկեղեցում: Մի այդպիսի տգեղ երևոյթ մենք նկատում ենք Կօջորի եկեղեցում. այստեղ եկեղեցու երէցփոխը ներկայ եղողների վզին մոմեր է կապում, չը քաշվելով գնի անմատչելիութիւնից, իսկ քահանաները իրանց գանձանակներով շրջում են եկեղեցու բակում... Այս բոլորը յարուցանում է արդար զայրոյթ յաճախողների մէջ: Թոյլատրելի է հարցնել. արդեօք չը կայ մի ուրիշ՝ աւելի պատւաւոր միջոց ապահովելու եկեղեցու սպասաւորների նիւթական դրութիւնը, որպէս զի առևտուրը արտաքսվի եկեղեցու գաւիթներից. և յետոյ—ում մտածողութեան և տնօրէնութեան հոգս պիտի լինի այս խնդիրը:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խոյ, օգոստոսի 10-ին

Հէնց այսօր իմ ձեռքն հասաւ «Մշակի» 107 համարը, ուր հրատարակել էք Թ. ստորագրութեամբ մի տեղեկութիւն, որը ինձ առիթ է տալիս խնդրելու ձեզանից՝ տպել հետևեալը «Մշակում»:

Իմ Պարսկաստան գալու նպատակը սա էր, որ Խոյի և Ուրմիի որբանոցները այցելելով՝ ինձ հետ եկող հայ պաստոր Ուրբշյանին, նրա տիկնոջը և դաստիարակիչ երկու օրիորդներին իրանց պաշտօնների վրա կարգեմ և ոչ թէ մի որ և իցէ բանից ստիպված, ինչպէս ձեր թղթակիցը գրում է՝ «ստիպված վերջապէս եկաւ անձամբ բարդված կնճռոտ խնդիրները քննելու»:

Ձեր թղթակիցը ինչ որ բարդված կնճռոտ խնդիրներ անուանում է՝ չարակամութիւնից առաջ եկած, գոյութիւն չունեցող բաներ են: Ես այստեղ գալով՝ երկու ամսվայ ընթացքում նկատեցի և տեսայ, որ Խոյի և Ուրմիի որբանոցները ամենալաւ դրութեան մէջ են և աւելի ես քաջալերվում ենք, երբ տեսնում ենք, որ պարսից կառավարութիւնը և թէ ժողովուրդը մեր գործը մարդասիրական գործ են ճանաչում: Ոչ թէ միայն Խոյի, Սալմաստի և Ուրմիի ընդհանուր կառավարիչ վսեմաշուք Իգբալ-Մուլք խեղճ որբերի համար Պարսկաստանում եղած խնամքի առիթով շնորհակալութիւն յայտնեց, այլ նաև մեզ ցոյց տուեց այն հրամանը, որ նորին կայսերական բարձրութիւն Վէլիէհից ընդունել էր այս մեր գործին պաշտպանելու և նպաստելու համար:

Որբանոցի Սալմաստից Խոյ փոխադրվելը, որ ձեր թղթակիցը յիմարութիւն է կոչում, մի խելացի և կարևոր գործ էր, որի վրա մինչև անգամ Վեհափառ Կաթողիկոսը իր ուրախութիւնը արտայայտել էր, որովհետև Սալմաստում ստէպ տիրող յուզմունքների պատճառով որբանոցը միշտ վնասի ենթակայ լինելով՝ նպատակին պիտի չը հասնէր:

Ձեր թղթակիցը գրում է նաև այն դէպքի մասին, որ Խոյ ժամանելուց մի քանի օր առաջ, պաստոր Ֆօն Բէրգմանի բացակայութեան ժամանակը, որբանոցի հայ տնօրէնը, մի պարսիկ սէյիդի խօսքերից վախենալով՝ առանց մի իրական պատճառի վեր է առնում երեխաներին հէնց աշուրայի օրերում ոչ թէ գիշերով, ինչպէս ձեր թղթակիցն է գրում, այլ ցերեկով և Խոյից Ուրմի է տանում: Բայց ես ստուգեցի, որ այդպիսի մի քայլ անելու, բացի միամիտ հայ տնօրէնի շփոթմունքից. ուրիշ որ և է պատճառ չէ եղել, մինչև անգամ պարսից կառավարութիւնը խոստացել էր իր պաշտպանութիւնը ի գործ դնել, եթէ այդպիսի մի բան պատահելու կարելիութիւնը նշմարվէր, ուստի կարգադրեցի, որ իսկոյն որբերը Ուրմիից յետ բերվեն Խոյ: Եթէ ես և պաստոր ֆօն Բէրգմանը այստեղ լինէինք՝ այդ բանը չէր պատահի և այդպիսի մի անհիմ լուրին՝ թէ մահմեդականները իրանց Մուհարլամում անմեղ որբերին պիտի մորթեն, չէինք թողնի հաւատալ:

Արդ՝ երեխաները արդէն վերադարձել են Խոյ և այժմ փոխադրվեցին նոր որբանոցը, որի շինութիւնը կատարվելու է: Խոյի որբանոցը կառուցված է մի ընդարձակ պարտիզի մէջ, քաղաքի առջև. իր չորս շէնքերը ունեն 33 մեծ սենեակներ, որոնց մէջ որբերը կարող են ապրել առողջապահական պայմանների համեմատ: Թէ խոյի որբանոցի շինութիւնը և թէ Ուրմիի որբանոցի շէնքը մի միայն յիշատակ են լինելու պաստոր ֆօն Բէրգմանի ջանքի և հաւատարմութեան, որ նուիրել է ի ծառայութիւն հէգ թշուառների՝ հանդէպ գերմանական հիլֆսբունդի:

Ձեր թղթակիցը իր յօդուածի վերջում մութ խօսքերով պարզապէս ակնարկում է այն զրպարտութիւնը, որ պ. Միհրան Պաղդասարեանը պաստոր Ֆօն Բէրգմանի դէմ արել է, որի մասին պ. Պաղդասարեանը երբէք մի ապացոյց առաջ բերել չէ կարողացել. անպատիւ խօսքեր և խայտառակ զրպարտութիւնները ապացոյց չեն կարող լինել: Պ. Պաղդասարեանը այն օրվանից սկսեց պաստոր Ֆօն Բէրգմանին դաւաճանել, երբ որ պաստոր Ֆօն Բէրգմանը ստիպվեց պ. Պաղդասարեանից ծախսարարութեան պաշտօնը յետ առնել:

Պ. Պաղդասարեանը իր այդ ընթացքի մէջ այնքան առաջ էր գնացել, որ մինչև անգամ Բերլինում հրատարակվող մի Թրքասէր լրագրի

մակրութիւն մը գոյութիւն ունի այժմ Բարիզի մէջ), և հրապուրվելով անոր «փիզիքական» յատկութիւններէն, մէկ քանի ներբողալից փռազներ նուիրած են իրեն: Եթէ այդ անձերը հայերէն գիտնային՝ երբէք պիտի չը գրէին ինչ որ գրեցին. Գալֆայեան գէշ կարտասանէր «Լինել թէ չը լինելը», արտասանածը չէր հասկնար, և գիւահարի շարժումներ ու ոստումներ ունէր: Արդէն, նոյն իսկ, առանց հայերէն գիտնալու, եթէ այդ անձերը ճշմարիտ քննադատներ ըլլային՝ Գալֆայեանին խաղ խաղացուածքէն ու անգիտակից շարժուածքներէն պիտի կարենային գուշակել որ պարզապէս farceur մըն էր ան և ոչ թէ «արուեստագէտ». այդպէս եղաւ առաջին անգամը որ Գալֆայեան իր դիմացը ունեցաւ ճշմարիտ քննադատ մը, Սարսէն. Սարսէ իսկոյն հասկցաւ որ «խեղկատակ» մըն էր այդ «երևելի հայ ողբերգուն»: Բայց Սարսէին դիմացը խայտառակվելէ առաջ: Գալֆայեան ունեցաւ ուրիշ պատմութիւն մը. գնաց գտաւ «Ֆիկառօի» աշխատակիցներէն մին, պ. Ժան-Պեռնառ, որուն կլլեցուց թէ ինքը Կ. Պոլսոյ հայկական թատրոնին մեծ ողբերգուն է. Ժան-Պեռնառ, հաւատալով, ցերեկոյթ մը կազմակերպեց, ուր Գալֆայեան ներկայացուց «Համլէթէն» տեսարան մը (Մօրը հետ տեսարանը). Ժան-Պեռնառ շատ ճարպիկ ու զգոյշ եղաւ. սրտագին գովեստներով խօսեցաւ հայ ազգին, հայ թատրոնին, Ադամեանին վրա, բայց երբ կարգը Գալֆայեանին եկաւ՝ ամեն տեսակ վերապահումներ ըրաւ. «չեմ գիտեր, ըսաւ, թէ այս պարոնը ինչպէս կը խաղայ. չեմ գիտեր ինչ կարծիք պիտի ունենանք իր մասին. իր ըսելուն նայելով՝ Պոլսոյ մէջ յաջողութիւններ ունեցեր է, օտար մըն է, երիտասարդ մըն է, ներողամիտ եղէք: Ժան-Պեռնառ իրաւունք ունէր պատասխանատուութիւնը վրան չառնելու. Գալֆայեան շատ գէշ խաղաց, դերը չէր գիտեր (ինչպէս միշտ). բեմին վրա քալելու, շարժելու ո և է վարժութիւն չունենալը յայտնի էր. սուրը քաշած ատենը ձեռքէն վար ընկաւ. կոկորդային ահռելի ձայներ կը հանէր, որոնք հայերէն լեզուին հետ և ոչ իսկ հեռաւոր նմանութիւն մը ունէին. հանդիսականները, որ ջերմապէս ծափահարած էին Ժան-Պեռնառի բանախօսութիւնը, շատ ցուրտ կերպով ընդունեցին Գալֆայեանին խաղացուածքը. տեսարանին աւարտելուն, մէկ քանի ծափ լսուեցաւ միայն, և հայեր էին զարնողները:

Երկրորդ օրը «Ֆիկառօն», որ ազդուելով ծանուցած էր այս ներկայացումը՝ ոչինչ կը գրէր անոր մասին. Ժան-Պեռնառ լռութիւն կը պահէր: Միայն «Թանին» մէջ երևցաւ անստորագիր յօդուածիկ մը, ուր կը պատմուէր թէ Գալֆայեան, Պոլսոյ հայկական թատրոնին մեծ ողբերգուն, ջարդերուն ատեն Թուրքերէն հալածուած էր, թէ իր քոյրը պղծած էին, մայրը յօշոտած էին, և ինքն ալ լեռները քշուած էր և այլն: Այդ Համլէթի ներկայացումէն առաջ մէկ քանի անգամ տեսայ Գալֆայեանը, որ եկաւ ինծի խորհուրդ հարցնելու. յորդորեցի զինքը որ ետ կենայ բեմ ելլելէն, և իր ամբողջ ժամանակը նուիրէ սորվելու: Տեսնելով որ Համլէթի այդ տեսարանը ներկայացնել վերջնապէս որոշած էր՝ պնդեցի որ հայ հասարակութեան մը առջև փորձէ, և այն ալ՝ իբրև ուսանող. դեռ չէի յուսահատած իրմէ, և կը կարծէի, թէ պիտի կարենայի զինքը ուղղել. խնդրեց, որ Համլէթի տեսարանը արևմտեան աշխարհաբարին թարգմանեմ. կատարեցի այդ աշխատութիւնը, այն պայմանով, որ «իբրև ուսանող» պիտի խաղար: Գալֆայեան ստեց, խոստացաւ յորդորիս հետևիլ, և իր գիտցածը ըրաւ նորէն: Համլէթի ներկայացումէն յետոյ, հարցուցի իրեն, թէ ո՞վ տուած էր «Թանի» լրագրին՝ այդ արտառոց տեղեկութիւնները: «Չեմ գիտեր, ես այդպէս բան չըսի», պատասխանեց: Այդ վայրկեանին հասկցայ, որ խաչագող մըն էր. զզուեցայ իրմէ, և դադրեցուցի յարաբերութիւններս:

Հայ մամլոյ մէջ ապշութեամբ ու ցաւով կը տեսնէի խելայեղ ներբողներ, որ կաստուածացնէին այս ցաւալի ստախօսը: Չափազանց բեռնաւորված ըլլալով զբաղումներով և ինծի յատուկ թերթ մը չունենալով այդ միջոցին, առիթ չունեցայ մտածումս հրապարակաւ յայտնելու:

Օթելլոյի ներկայացումը պսակումը եղաւ այս անճոռնութեանց շարքին: Գալֆայեան, այլևս առանց ո և է ամօթխածութեան, բացէ ի բաց իր աֆիշին մէջ կը յայտարարէր, թէ ինքը Պոլսոյ հայ թատրոնին ողբերգուն է, թէ Թուրքերը զինքը հալածած են, և այլն և այլն: Յայտնապէս կը շահագործէր հայ թատրոնին վարկը, և հայկական գործերուն Ֆրանսայի մէջ հայոց համար յառաջ բերած համակրութիւնը: Աններելի է, որ պ. Թումանեանց փորձած ըլլայ չքմեղացնել Գալֆայեանը, ըսելով, թէ ան «իբր սովորող» ներկայացած է ֆրանսական հասարակութեան: Եթէ «իբր սովորող» ներկայացած ըլլար՝ բան մը պիտի չըսէի. ուսանող մը, գէշ խաղաց կամ լաւ, պատասխանատուութիւնը իր վրա կը մնայ միայն. բայց Գալֆայեան կը ներկայանար իբր «հայ երևելի արուեստագէտ», այնպէս որ հայ թատերական արուեստը, հայ հասարակութեան ճաշակը խնդրոյ առարկայ պիտի դառնային. իր անյաջողութեամբը, ֆրանսացին իրաւունք պիտի ունենար ըսելու. «Ա՛ս է հայոց մեծ ողբերգուն. ինչ ողորմելի ժողովուրդ է ուրեմն հայը»: Եւ սխալ է կարծել, թէ Գալֆայեան «գէշ խաղաց» Օթելլօն. կըմբռնեմ, որ դերասան մը կրնայ երբեմն այս ինչ կամ այն ինչ դերը լաւ չը թափանցել և զայն անճիշդ կերպով մեկնել. Գալֆայեան և ոչ իսկ դերը գոց սորված էր, յուշարարը իրմէ առաջ բառ առ բառ ամբողջ դերը բարձրաձայն կաղաղակէր, և ինքն ալ բառ առ բառ կը կրկնէր, յուշարարէն աւելի գէշ արտասանելով. երբ «գէշ արտասանութիւն» կըսեմ՝ չը լսողին համար անկարելի է երևակայել, թէ որ աստիճան հրէշային բան մըն է. հայերէնը, այդ ցաւագար կոկորդին մէջ, անկերպարան չչիւն մը, կաղկանձիւն մը կը դառնար, թաշկինակին համբաւաւոր տեսարանին մէջ, «թֆչչթչս» կըսէր Գալֆայեան, և պէտք էր գուշակել, թէ «թաշկինակս» ըսել կուզէ: Իսկ Օթելլոյի դերը ըմբռնած ըլլալու խնդրոյն գալով, ծիծաղելի պիտի ըլլար այդ մասին վիճել. ինչպէս կուզէք, որ կապիկ մը Օթելլօն ըմբռնէ. Գալֆայեան Օթելլօն խաղաց, ոչ թէ իբրև գէշ դերասան մը, այլ իբրև կապիկ մը: Այդ երեկոյթը եղաւ ոչ թէ անյաջող ներկայացում մը, այլ խայտառակութիւն մը: Սարսէն «կինեօլ» (քարակեօզ) բառով որակեց զայն: Տեսայ ֆրանսիացիներ, որ կոկորդային ձայներ հանելով կը խնդային. հայերէն լեզուն կը ծաղրէին, կարծելով թէ Գալֆայեանին լեզուն հայերէն է: Այդ իրիկունը ամչցայ հայ ըլլալէս: Բնաւ չեմ զարմանար, որ այդքան զայրոյթով ու կատաղութեամբ գրած ըլլամ «Անահիտին» յօդուածս: Ուրիշ կերպ ընել կարելի չէր: Եթէ պ. Թումանեանց չըմբռնէր այս բանը՝ այդ կը նշանակէ որ իր ցեղին արժանապատուութեան զգացումը չունի:

Անբարոյական արարքներու հանդէպ մեր ժողովրդին սովորաբար ցուցուցած անտարբերութիւնը տխուր ու վրդովիչ երևոյթ մըն է: Եւ եթէ այս բոլոր պատմութիւնը մանրամասնօրէն գրելու ձանձրութիւնը յանձն կառնեմ՝ պատճառը այն է, որ ջերմօրէն կը փափաքիմ մեր հասարակութիւնը նուազ ներողամիտ տեսնել խաբեբաներու նկատմամբ:

Արշակ Չօպանեան

Փարիզ.

ուղղել էր մի երկար յօդուած, որ լի էր ստութիւններով, թէ ինձ և թէ գերմանական հիլֆսբունդի դէմ անարգ խօսքերով. բայց այդ լրագրի խմբագիրը պատւաւոր անձ լինելով՝ այդ յօդուածի ձեռագիրն ինձ ուղարկեց: Եւ ես, հայասէր լինելով, ամաչում էի մի հայի արած գրպարտութեան դէմ ճշմարիտ ապացոյցներ առաջ բերել: Բայց, ճարահատեալ, նրան պատասխանեցի. և նա, լինելով հայատեաց, ինձ գրեց, թէ՝ ուրեմն իրաւունք չունինք հայոց դէմ լինելու, քանի որ նրանք այնպիսի մի ժողովուրդ են, որ մինչև անգամ իրանց բարերարների դէմ այդպիսի տգեղ ընթացք են բռնում:

Մեծ. խմբագիր. ես և իմ բարեկամներս այս վերջին երեք տարիների ընթացքում շատ նեղութիւններ կրելով՝ աշխատել ենք ոչ թէ միայն գործով հայ ազգի թշուառներին օգնութիւն հասցնել, այլ նաև խօսքով և գրութեամբ պաշտպանել ենք հայ ազգի արատաւորված պատիւը ընդդէմ եւրոպական հայատեաց մամուլի: Այսպիսի մեծ դժուարութիւնների ներքև աջողվել է մեզ ընդհանրութեան համակրանքը դէպի թշուառ հայերը այն աստիճան գրաւել, որ ոչ թէ միայն 2,000,000 մարկ կարօտեալների օգնութեան համար հաւաքվել և գործադրվել է, այլ այժմս էլ մօտաւորապէս 2000 հայ որբեր գերմանական ծախսով խնամվում են:

Արդ, կամենում էք, որ ես հիմա հայոց պատւի դէմ բողոքող լինեմ. քաւ լիցի, որ ես մի քանի անհատների անվայել վարմունքի պատճառով ամբողջ ազգին մեղադրեմ: Տարակոյս չը կայ, որ ձեր լրագիրը, արդարութեան և իրաւանց սկզբունքին հետևելով—«audiatur et altera pars»—այս գրութիւնը կը հրատարակէ»:

Դոկտոր Յօհաննէս Լէպսիուս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան կառավարչապետ իշխան գեներալ Գօլիցին, «Казбекъ» լրագրի ասելով, երէկ, օգոստոսի 25-ին, պէտք է թողնէր Էսէնտուկի հանքային ջրերը:

—

Թիֆլիս վերադարձաւ ճանապարհորդների մի խումբ, որ գնացել էր Քութայիսի նահանգում գտնվող Սվանեթեան կոչված տեղը՝ ուսումնասիրելու տեղական պայմանները: Այդ խմբի մէջ եղած ագրօնօմը բերել է Սվանէտիայի հացաբոյսերի նմուշները, որոնք պէտք է ուղարկվեն Պարիզի ցուցահանդէսը: Ճանապարհորդութիւնը տևել է երկու շաբաթ:

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով՝ համառուսական հնագիտական միւս ժողովը տեղի կունենայ Խարկով քաղաքում 1902 թւին:

—

Ֆրանսիական ժուրնալիստ Ալէքսանդր Հէպպ թոյլտւութիւն է ստացել եկող տարվայ յունվարի 1-ից Պետերբուրգում մի լրագիր հրատարակել ֆրանսերէն լեզուով:

—

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ հաղորդում են. «Կիրակի, օգոստոսի 22-ին, հանգուցեալ հայ բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանի եօթներորդ տարելիցի յիշատակին, կատարվեց Մօսկվայի հայոց եկեղեցում հոգեհանգիստ:»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Անցեալ շաբաթներում մի լուր տարածվեց, որ «մարդագելին սպանել են» և բերել պօլիցիան: Ամեն ոք ուրախացած վազում էր այդ անխիղճ գազանին տեսնելու և կէս ժամվայ մէջ համարեա ամբողջ գիւղը ժողոված էր գիւղի ծայրում: Սակայն իզուր. լսելով տեղիս գաւառապետի նշանակած 50 րուբլի նուէրը այն անձին, որ կը սպանի բորենուն՝ գիւղացի երկու թուրքեր սպանել էին մէկ մեծ շուն, պոչը ու ականջները կարճացրել և նմանեցրել ժողովրդի մէջ տարածված բորենու տեսքին, կարծելով, որ այս ձևով կարող են օգտվել 50 րուբլի վարձատրութեամբ:»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ գիւղացիների մէջ վերջին տարիներս տարածվում են եւրօպական գութաններ: Օրինակ, այդ գութաններից կան Խօսպիա, Ջանդուրա, Մամզարա, Օկամ գիւղերում: Փորձերը ցոյց տուին, որ ամենից աջող գործում է Գենի Н П Ж № 4 նշանով գութանը, որ հերկում է 5—6 վերշօկ խորութեամբ:

—

Անդրկասպեան երկրի **ԿՈՒՇԿԱ** քաղաքից մեզ գրում են. «Այսօր, օգոստոսի 16-ին, առաւօտեան ժամի 8-ին, այստեղ հասաւ Միջին-Ասիայի գեներալ-նահանգապետ Դուխովսկոյ: Երկաթուղու կայարանից մինչև եկեղեցու բակը լիքն էին՝ հայ, ռուս, պարսիկ և ավղան ժողովուրդ: Մի կողմում կանգնած էին զինուորները և հեծելազօրքը: Դուխովսկոյի վագօնից դուրս գալիս արձակեցին թնդանօթից 21 անգամ: Ողջունելով օֆիցէրներին՝ գեներալն անցաւ զինուորների և հեծելազօրքի կողմը, հարցրեց առողջութիւնները. յետոյ անցաւ ժողովրդի մօտով, ողջունելով. հայերից և ռուսներից ընդունեց աղ ու հաց, իսկ Թախտաբազար կոչված տեղի խանից և պարսիկներից՝ միայն հաց: Կանչեց այստեղի Ալէքսէեվսկի և Պօլտավսկի ռուս գիւղացիներին, հարցրեց նրանց ապրուստի մասին. նրանք պատասխանեցին, թէ այս տարի հունձը պակաս է, ջուր չը լինելու պատճառով: Հայերին դիմելով՝ ասեց. «Ինչ գործով էք զբաղվում, արբեցողութիւն չէք անում. աշխատեցէք լաւ լինել»: Հարցրեց պարսիկների և ավղանների առողջութիւնը: Հրամայեց՝ ավղաններին այսօր տալ ճաշկերոյթ: Այնուհետև ձի նստելով՝ հինգ գեներալների, տասը օֆիցէրների և հեծելազօրքի հետ շրջեց այստեղի բերդերը: Երեկոյեան ժամի 8-ին նոյն գնացքով գեներալը ճանապարհ ընկաւ դէպի Տաշկէնտ»:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Մենամարտութեան սովորութիւնը մտել է գործում և մեր գիւղերում, սակայն միանգամայն ասիական կոպիտ ձևով: Մաստարա գիւղում ի միջի այլ անձանց, գալիս են հրապարակ ձմերուկ գնելու երկու քաջ երիտասարդներ: Սրանցից մէկը ձմերուկով հիւրասիրում է միւսին և պահանջում, որ մի հատ էլ նա գնէ և հիւրասիրէ իրան. բայց վերջինս հրաժարվում է և այդ պատճառով նրանց մէջ սկսվում է անբաւականութիւն: Սկզբում միմեանց լաւ հայհոյում են, յետոյ միմեանց լաւ ծեծում. սրանով էլ չը բաւականանալով՝ պայմանաւորվում են և, վերադառնալով իրանց տները, վերցնում են մէկ մէկ խէնջալ և այսպէս յարձակվում միմեանց վրա օր ցերեկով, բազմաթիւ գիւղացիների ներկայութեամբ, որոնց սկզբից խնդրում են չը միջամտել և սպանութեան մասին ոչ ոքի չը մեղադրել: Առաջին յարձակումից երկուսն էլ վիրաւորվում են խէնջալով և հաշտութիւն կայացնելով՝ այլ ևս չեն ուզում շարունակել մենամարտութիւնը: Սակայն փոքր առ փոքր կրկին տաքանում են և կրկին սկսում մենամարտութիւնը: Կռւողներից մէկը, որ աւելի քաջ է եղել, աշխատել է խոյս տալ երկրորդ անգամ կռւելուց, սակայն միւսը յարմար րոպէ գտնելով՝ այնպէս է խփում առաջինին, որ վերջինս իսկոյն վայր է ընկնում գետին և անշնչանում: Սրա նման մի դէպք էլ պատահեց Այլանլու գիւղում, որին զոհ գնաց մեր հասարակութեան դատաւորներից մէկը՝ Խաչատուր անունով: Երեկոյեան դէմ՝ սպանվող Խաչատուրը, լսելով որ իր բարեկամին անպատւել են, վերցնում է խէնջալը և գնում օգնութեան իր երկու ազգականների հետ միասին, սակայն սպանողը այնքան ճարպիկ է գտնվում, որ կարողանում է Խաչօին սպանել, իսկ միւս ընկերներին ծանր վէրք հասցնել: Մաստարա և Այլանլու գիւղերի մարդասպանները խէնջալները ձեռքերին՝ իրանք իրանց գնացել են ուր հարկն է և յայտնել եղելութեան մասին: Առաջինը արձակված է բանտից, իսկ երկրորդը դեռ ևս բանտարկված է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Lantern» լրագրի թղթակիցը պատմում է այն խօսակցութիւնը, որ նա ունեցել է դիւ-Պատի-դը-Կլամի որդու հետ: Վերջինս, թղթակցի ասելով, յայտնեց, թէ ինքն այժմ գրում է իր հօր թելադրութեամբ այն ցուցմունքը, որը իր հայրը մտադիր է ներկայացնել Ռէննի դատարանին: Դիւ-Պատի,—նրա որդու խօսքով,—աշխատում է պատմել իրականութիւնը, ոչ այնքան իրան արդարացնելու նպատակով, որքան ճշմարտութիւնը պարզելու համար:

—«Нов. Вр.» լրագրին հեռագրում են Ռէննից, որ Լէբրէն-Ռէնօ խոստովանել է, թէ նա երբէք Դրէյֆուսի խօսքերին խոստովանութեան նշանակութիւն չէ տուել. ինքը միայն հաղորդել է նրա խօսքերը, իսկ նրանց գնահատել են և բացատրել իր մեծաւորները:

—«Berliner Tageblatt» լրագրի Բրիւսէլի թղթակիցը հաղորդում է. «Petit Bleu» լրագրի թղթակիցը մի քանի տեղեկութիւններ է ժողովել ֆրանսիական ընդհանուր շտաբի լրտես Լաժուի մասին, որը առաջին անգամ մատնացոյց արաւ Էստէրհազիի վրա: Լաժու խիստ հարբեցող էր և հարբած ժամանակ նա միշտ պատմում էր իր ծառայութեան գաղտնիքները: Երբ 1895 թւին ձերբակալեցին Դրէյֆուսին, Լաժու հաղորդեց մի քանի անձանց, թէ նա լսել է գերմանական գործակալ Կրիւգերից, որ Դրէյֆուս անմեղ է. նա մինչև անգամ ցոյց է տուել Կրիւգերի այն նամակը, որի մէջ ասված է, թէ հաւատացած է Դրէյֆուսի անմեղութեան մէջ: Երբ Լաժուի այդպիսի վարմունքի մասին տեղեկացաւ ընդհանուր շտաբը, նա իսկոյն Բրիւսէլ ուղարկեց իր գլխաւոր գործակալներից մէկին, որպէս զի Լաժուից առնեն այդ գաղտնի դօկումենտները: Այդ գործակալը մի ինչ որ գործի համար Լաժուին ուղարկեց Անտվերպէն և նրա բացակայութեան միջոցին խուզարկութիւն կատարեց նրա բնակարանում: Լաժու շուտով վերադարձաւ Բրիւսէլ և նորից սկսեց շարունակել շտաբի գաղտնիքները հաղորդել: Այն ժամանակ Անրի Բրիւսէլ ուղարկեց յայտնի Գրիբլէնին, որ ընդհանուր շտաբի անունից ուղարկեց Լաժուին Ամերիկա: Լաժու համաձայնվեց և իսկոյն ճանապարհ ընկաւ դէպի Բրազիլիա: Բայց գնալուց առաջ նա իր գրադարանը ծախեց մի ինչ [illegible] դօկտոր Դ-ի վրա: Լրտեսի գրքերի մէջ Դ-ին աջողվեց գտնել բազմաթիւ դօկումենտներ, որոնք մեծ նշանակութիւն ունէին շտաբի համար: Հէնց որ այդ մասին լսեցին Պարիզում՝ իսկոյն Անրի ուղարկեց Բրիւսէլ իր գործակալ Մուլիէին, որին պատուիրեց անպատճառ գրաւել այդ դօկումենտները: Բայց Դ-ին դժուար էր համոզել. նա ցոյց տուեց Մուլիէին բոլոր դօկումենտները և մի և նոյն ժամանակ յայտնեց, որ եթէ փորձ անէ այդ դօկումենտները խլել, նրա գլուխը կը ջարդէ: Մուլիէ շտապեց հեռանալ Դ-ի բնակարանից և այդպիսով այդ դօկումենտները մինչև այժմ էլ մնում են Դ-ի մօտ: Դ-ի հասցէն յայտնի չէ «Petii Bleu» լրագրի խմբագրատանը: Յօդուածը վերջանում է յոյս յայտնելով, որ Դ. անշուշտ օգուտ կը քաղէ այդ դօկումենտներից «Libre Parole» և «Intransigeant» լրագիրների գործի քննութեան ժամանակ, որոնց դէմ դատ է բացել Ռօլլեան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

24 օգոստոսի

ՊԱՐԻԶ: Նախագահ Լուբէ կը վերադառնայ Պարիզ ժամի 4-ին կէս օրից յետոյ և ժամի 6-ին կը նախագահէ մինիստրների խորհուրդի ժողովին: Նրան կը ներկայացնեն ստորագրելու այն հրովարտակը, որով հրաւիրվում է բարձրագոյն դատարան սեպտեմբերի 2-ին (14-ին):

ՏՈՒՐ: Այսօր, առաւօտեան, խուզարկեցին չորս անձի՝ որոնց թւում և Պօնտէսին. դրանք կապ ունեն դաւադրութեան հետ:

ՊԱՐԻԶ: Հաւատացնում են, որ այն անձինք, որոնք կենթարկվեն բարձրագոյն դատարանին, կը մեղադրվեն ոչ միայն դաւադրութեան մէջ, այլ և պետութեան ներքին անդորրութիւնը խախտելու յանցանքի մէջ, այսինքն այն բանում, որ նրանք ոչ միայն մտադիր են եղել գործելու, այլ և սկսել են իրանց մտադրութիւնը իրագործել:

ՊԱՐԻԶ: Դէբիւկ, հակահրէականների լիգայի նախագահը Պարիզում, այսօր, երեկոյեան, ձերբակալվեց:

ԲԵԼԳՐԱԴ: Նախկին խնամակալ Րիստիչի մահվան պատճառով, դատաստանական գործի քննութեան սկիզբը յետաձգված է մինչև ուրբաթ:

ԲՈՄԲԷՅ: «Civil and Military Gazette» լրագիրը, որ լոյս է տեսնում Լակօրում, հաղորդում է, թէ ռուս-ավղանական սահմանի վրա տեղի է ունեցել սաստիկ կռիւ՝ մի կողմից Մահօմէտ—Իսմայիլ խանի, Իզախանի որդու, և միւս կողմից ավղանական զօրքերի մէջ, որոնց հրամանատարն է եղել Միր-Մահօմէտ խան: Էմիրի զօրքերը սկզբում մեծ կորուստ ունեցան, բայց երբ վրա հասան օգնական զօրքեր, ջարդեցին Իզմայիլ-խանին, որը և փախաւ դէպի ռուսաց սահմանը:

ԼՕՆԴՕՆ: «Standard» լրագրին հեռագրում են Իօհաննէսբուրգից, որ մինչև անգամ այն անձերը, որոնք մինչև այժմ բօէրներին չափաւորութիւն էին ներշնչում՝ այժմ սկսում են կորցնել յոյսերը և պատերազմը անխուսափելի են համարում: Այդ անձերից մէկը այն կարծիքն է յայտնել, թէ Տրանսվաալ կարող է 30,000 մարդ դուրս բերել, իսկ Օրանժի հանրապետութիւնը 20,000 մարդ:

ՊԱՐԻԶ: «Eclair» լրագիրը կարծում է, որ մօտ 30 մարդ խառն են դաւադրութեան մէջ: «Matin» լրագիրը 44 անուն է տալիս և աւելացնում է, որ դատարանի նիստը մի դատարկ ձևականութիւն կը լինի և այն միտքը կը յայտնվի, թէ կան արդեօք հիմունքներ՝ պրօկուրօրի զեկուցումը քննիչ յանձնաժողովին ներկայացնելու, որպէս զի դաւադրութեան մասնակցողների դէմ դատ բացվի: «Echo de Paris» լրագիրը կարծում է, որ դաւադրութեան գործի հրապարակական քննութիւնը տեղի կունենայ ոչ վաղ քան նոյեմբերին կամ դեկտեմբերին:

ՌԷՆՆ: Դռնփակ նիստը շարունակվեց մէկ ժամ և ամբողջապէս նուիրված էր լրտեսութեան վերաբերեալ գաղտնի dossier-ին: Ջերնուսկի հարց ու փորձի չենթարկվեց: Հրապարակական նիստը սկսվեց 8 ժամին: Լաբօրի կազմում է իր եզրակացութիւնները, որոնց միտքն այն է, թէ կառավարութիւնը պէտք է դիպլօմատիական ճանապարհով ձեռք բերէ շահ ունեցող պետութիւններից բորդէրօի մէջ յիշատակված դօկումենտները: Լաբօրի ասում է, թէ պահանջում է դատարանից, որ հրաւիրվեն Շվարցկօպէն և Պանիցարդի: Կարիէր Լաբօրիի եզրակացութիւններին պատասխանում է, որ հազիւ թէ կառավարութիւնը կարողանայ դիմել օտարերկրեայ պետութիւններին՝ պահանջելով տալ դօկումենտները, որոնք ոչ դիպլօմատիական բնաւորութիւն ունեն և ոչ պաշտօնական, և դրա դէմ Կարիէր առաջ է բերում զանազան պատճառներ: Իսկ Շվարցկօպէնին և Պանիցարդիին հարց ու փորձի ենթարկելու դէմ ինքն ոչ մի անյարմարութիւն չէ տեսնում: Պալէօլօգ, կառավարութեան անունից, յայտնում է, թէ դիպլօմատիական խորհրդածութիւնները անկարելի են դարձնում պահանջել դօկումենտների հաղորդելը: Նախագահը յայտնում է, թէ դատարանը այդ մասին որոշում կը կայացնէ յետոյ:

«Matin» լրագրի խմբագիր Բօսէ պատմում է, թէ Էստէրհազի իրան յայտնել է, որ բորդէրօն գրել է ինքը 1894 թւին Սանդգերի առաջարկութեամբ, որը ցանկանում էր ոչնչացնել Դրէյֆուսին:

Ռօժէ ասում է, թէ Էստէրհազիի յայտարարութիւնը փաստօրէն ճիշդ չէ:

25 օգոստոսի

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ: Բանկէտում կայսրը առաջարկեց կայսերական երկիրների կենացը, կայսրուհու կողմից ցաւակցութիւն յայտնեց նրա բացակայութեան համար և շնորհակալութեամբ շեշտեց այն երևոյթը, որ իր պապի ժամանակից գնալով աճում է իրան ցոյց տուած ընդունելութեան ջերմութիւնը: Ապա կայսրը մատնացոյց արեց, որ կայսերական երկիրները ահագին առաջադիմութիւն են արել և բարգաւաճել և որ այդ երկիրները հասկացան վերջապէս թէ ինչ շահ ունեցան կայսրութեան հետ միանալով: Ինքն, կայսրը, յարգում է նախկին սերունդների զգացմունքը, որոնց դժուար էր թւում ենթարկվել նոր կարգերին, և շնորհակալութիւն է յայտնում ցնծուն երիտասարդ սերունդին: Կայսրը խնդրում է հոգևորականութիւնից նպաստել, որ ամրանայ յարգանքը դէպի գահը և վստահութիւն դէպի կայսրութիւնը: Ջուարթ ընդունելութիւնը ապացուցանում է, որ կայսերական երկիրները հասկացել են թէ ապահովութիւն են վայելում կայսերական արծուի թևի տակ: Կայսրը յոյս ունի, որ կայսերական երկիրներին վիճակված է դեռ երկար վայելել խաղաղութիւնը. ինքն, կայսրը, կանի ինչ կարող է, այդ խաղաղութիւնը պաշտպանելու համար:—Ինձ թողէք,—վերջացրեց կայսրը,—հոգ տանել, որ դուք այդ օգուտը ստանաք:»

ՊԱՐԻԶ: Անգուլէմում, Նեվէրում, Մարսէլում և Բօրդօում գտել են հակասահմանադրական համախոհութիւն միապետականների և հակասեմիտների մէջ:

Պարիզը հանգիստ է. Շաբրօլ փողոցում ամեն բան առաջվան պէս է:

ՌԷՆՆ: Նախագահը, «ազատարար» անունով դօկումենտի մասին գեներալ Բիյոյին հարց առաջարկելը մերժելուց յետոյ, Դէմանժ, վերադառնալով Էստէրհազիին, որպէս կեղծանձնին, ասում է, որ չէ հասկանում թէ ինչու են հաւատացնում, որ պաշտպանը կամենում է անուանարկել գլխաւոր շտաբը: Ռօժէ բացատրում է, որ Էստէրհազիին կեղծանձն է համարում, որովհետև Էստէրհազիի խոստովանութիւնը, թէ ինքն է կազմել բորդէրօ, չէ կարող ընդունվել: Ռօժէ կատարելապէս համոզված է, որ Էստէրհազին ընդունակ չէ դաւաճանութեան: Վերադառնալով Դէֆօն-Լամօտի ցուցմունքին, Ռօժէ կրկնում է 1894 թւին գլխաւոր շտաբում ծառայող օֆիցէրների դրութեան բացատրութիւնը: Դրէյֆուս պատասխանում է Ռօժէի նկատողութեանը, թէ դատարանին ներկայացրած շրջաբերականը մայիսի 17-ից կատարելապէս պարզ է այդ մտքով: Դրէյֆուս կրկին պնդում է, թէ երբէք չէ խնդրել, որ իրան զօրախաղերին ուղարկեն և չէր կարող գրել «ես գնում եմ զօրախաղերին» նախադասութիւնը: Այդ նախադասութիւնը,—ասում է նա,—դրական է, այն ինչ ոչ թէ ես չը գնացի, բայց երբէք չը պէտք է էլ գնայի զօրախաղերին:» (Երկարատև շարժում):

Հարցուփորձի ենթարկելուց յետոյ «Temps» լրագրի խմբագիր Դէֆֆիին, որը ասում է, թէ Էստէրհազին խոստովանեց Լօնդօնում իր առջև՝ թէ ինքն է բորդէրօն կազմել, դատարանը կանչում է Տրարիէին: Վկան բացատրում է, թէ ինքն ինչպէս սկսեց երկբայել Դրէյֆուսի մեղաւորութեան մասին: Նա չէ հասկանում. թէ ինչպէս Պիկար չը կարողացաւ իր կողմը դարձնել իր մեծաւորներին այդ խնդրում: Պիկարի կալանաւորման և զինդապետ Անրիի մերձաւորների նենգ արարմունքների մասին երկար բացատրութիւններից յետոյ, Տրարիէ ասում է, որ Էստէրհազիի կեանքի եղանակը տրամադրում էր նրան դէպի յանցագործութիւնը: Տրարիէ չէ կարծում, որ 1896 թւին մի մեղադրական փաստ անգամ լինէր Դրէյֆուսի դէմ, որովհետև Գօնզը այդ բանը կասէր Պիկարին՝ վերջինիս խուզարկութիւնները դադարեցնելու համար: Տրարիէ համոզված է, որ կատարեց իր պարտքը, երբ աշխատում էր ապացուցանել, որ Դրէյֆուս անմեղ է: Ապա նա պատմում է իր տեսակցութիւնը օտարերկրեայ մի դեսպանի հետ, որից իմացաւ, որ «Այդ անիրաւ Դ.» խօսքերով դօկումենտը Դրէյֆուսին չէր վերաբերվում և որ դաւաճանը Էստէրհազին էր: Տրարիէ ապա կրկնում է վճռաբեկ ատեանի առաջ իր տուած ցուցմունքը: Պատասխանելով յանդիմանական այն խօսքերին, թէ իր վկայութիւնները փոխ են առնված արտասահմանից, Տրարիէ ասում է, թէ օրէնքը չէ արգելում այդպիսի վկայութիւնը և թէ այդպիսի վկայութեան նախօրինակներ կային, որովհետև զինւորական դատարանը հարց ու փորձի ենթարկեց Չէրնուսկիին, և Գալլիֆէն վճռաբեկ ատեանի առաջ բերեց Տալբօտի վկայութիւնը: Տրարիէ յիշեցնում է, թէ ինքն Կավէնիակին ցոյց տուեց Անրիի կեղծմունքը, և զարմանում է, որ Մէրսիէ dossier-ի մէջ չը մտցրեց նոյեմբերի 2-ի հեռագրի պաշտօնական թարգմանութիւնը: Ապա վկան հերքում է Կիւինիէի և Բօժէի եզրակացութիւնները այդ հեռագրի վերաբերմամբ: Տրարիէ աշխատում է ապացուցանել, որ Էստէրհազին խրված էր պարտքերի մէջ, և որ նրա հոգին անգամ ֆրանսիացու հոգի չէր. նա է իսկական դաւաճանը. ինչ վերաբերում է Դրէյֆուսին, նա չէր կարող բորդէրօի հեղինակը լինել: Տրարիէ կարդում է այն դօկումենտը, որի նպատակն է ապացուցանել, թէ B. գործակալի և նրա կառավարութեան մէջ միջնորդներ չը կային: Բօրդէրօն քննելը,—աւելացնում է նա,—իր գործը չէ: Կարրիէր, վերաքաղելով Տրարիէի ցուցմունքի այն մասին, որը վերաբերում էր օտարերկրեայ վկայութիւններին, ասում է, որ եթէ կողմնակի միջոցներով կարելի լինէր դօկումենտներ ձեռք բերել, որոնց վրա մատնացոյց է անում Տրարիէ,—բոլորն էլ շատ երջանիկ կը լինէին: Լաբօրիի հարցմունքին, Տրարիէ պատասխանում է, թէ օտարերկրեայ փողերը ոչինչ դեր չեն խաղում յօգուտ Դրէյֆուսի արշաւանքի. հակառակ պնդումները բամբասանք են, որին Մէրսիէ իզուր հաւատաց:

Դատարանը ապա միաձայն մերժում է Լաբօրիի եզրակացութիւնը և յայտնում է, թէ իրան ձեռնհաս չէ համարում դատավճռի միջոցով դիպլօմատիական քայլեր անել տալ կառավարութեանը: Միաձայն որոշվեց լսել Չէրնուսկիին դռնփակ նիստի մէջ:

Նիստը փակվեց:

ՊԱՐԻԶ: Շվարցկօպէնին և Պանիցարդիին կառաջարկվի ներկայանալ Րէննի դատարանին: Նրանց դատարան կանչելու գործը կը ներկայացվի զինւորական մինիստրին, որը կը յանձնի նոյնը արդարադատութեան մինիստրին: Արդարադատութեան մինիստրը կը դիմի արտաքին գործերի մինիստր Դէլկասէին, որը իր կողմից կը հաղորդէ այդ բանը Բերլինի և Հռօմի ֆրանսիական դեսպաններին, և նրանք էլ իրանց կողմից, կանեն, ինչ որ հարկն է: Շվարցկօպէն և Պանիցարդի կարող են կամ անձամբ ներկայանալ դատարանին, կամ իրանց ցուցմունքներ տալ իրանց երկրի դատաւորին, որը դիպլօմատիկան ճանապարհով այդ ցուցմունքները կուղարկի զինւորական դատարանին: Այդ վկաների հարց ու փորձը, ինչ ճանապարհով էլ որ լինի, կերկարաձգէ դատը. գոնէ, մէկ շաբաթով:

ՊԱՐԻԶ: Մի քանի խուզարկութիւններ կատարվեցին միապետականների և հակասէմիտների անդամների մօտ Մարսէլում, Տուլուզում, Պօում, Նէվէրում, Անգուլէմում և այլ տեղերում: Մի քանի դօկումենտներ գրաւված են:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՊԱՏՈՒԱՒՈՐ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ

մէջ տրվում է մէկ լաւ մաքուր սենեակ իր կահկարասիքով, ծառայով և ճաշով:
Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատան:
4—6

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թւի սեպտեմբերի 7-ին, ցերեկվայ ժամի 1-ին, Վարչութեան բնակարանում նշանակված է աճուրդ կապալով տալու, երեք տարի ժամանակով, Վերայի կամուրջի հասոյթի ժողովելը:

Պայմանները կարելի է տեսնել Վարչութեան մէջ ամեն օր, բացի կիրակի ու տօն օրերից, առաւօտեան ժամի 9-ից, մինչև 12: 3—3

ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՂ

քիմիական մաքուր և այդ պատճառով ԱՄԵՆԱ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, պատրաստած

Բ. ԿԵՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

գործարանում: Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ և ԲՈԼՈՐ յայտնի վաճառականների մօտ:

Այդ աղը խոնաւութիւն ծծող չէ և այդ պատճառով աղամանի մէջ կոյտեր չէ կազմում: M. 75,287 (12)

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ սեպտեմբերի 8-ին, ցերեկվայ ժամի 1-ին, վարչութեան ատեանում նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային սիւները աֆիշաներ կպցնելու համար:

Պայմանները կարելի է տեսնել ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 9 ժամից մինչև 12: 3—3

КАПИЛЛЕРИНЪ

НОВОЕ СОВЕРШЕННО БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ ВОЛОСАМЪ ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ ЦѢНА 2 РУБ.

А. СІУ и Ко

M. 109538

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգեկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 փութ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն: Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագւի համար հարկաւոր գործիքներ:

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում:

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելէֆոն № 749), գործարան. տելէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելէֆոն № 451. (ե. հ. շ.)

Մանկական պարտէզ եւ ուսումնարան
ԿԱՏԱՐԻՆԷ ԳՈՒԼԻՋԱՆԵԱՆԻ

Բէբուտօվսկայա (նախկին Սադօվայա) փողոց № 38 միջին յարկ, ձախակողմեան բնակարան: Ընդունելութիւնը՝ օգոստոսի 25-ից, պարապմունքները՝ սեպտեմբերի 1-ից:
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՐԵԽԱՆԵՐ 1—5

Պատշաճաւոր թոյլտուութեամբ բացված է Բագւում

ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՕՐ. Ա. Ն. ՓՈՒՂԻՆԵԱՆՑԻ

Պատրաստում է բոլոր միջնակարգ դպրոցների համար: Ընդունելութիւնը կը սկսվի սեպտեմբերի 1-ից: Տօրգօվայա փողոց, տուն Թաղիեւների № 8: 1—3

Մանկական Պարտէզ-Ուսումնարան եւ Պանսիօն
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

◆ ԲԱԳՈՒ ◆

Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց գիմնազիայի, րէալական դպրոցի և այլ ուսումնարանների համար:

Մանկական Պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տ.) Ֆրեբելեան սիստեմով: Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ: 8—15

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Գ. Լ. ԿՈՒՐՋԱՆԵԱՆՑԻ

Բէբուտօվսկայա փողոց (նախկին Սադօվայա), Սօլօլակ, տուն բժ. Քօչարեանցի, № 50: Ընդունում է աշակերտներ պատրաստելու՝ գիմնազիաների, րէալական դպրոցի, կադէտների կորպուսի համար և այլն: Աշակերտների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 24-ից, իսկ պարապմունքները՝ սեպտեմբերի 1-ից: 2—10

ԲԱԳՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻ

Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ և երթևեկ պատրաստվում են գիմնազիոն րէալական և այլ դպրոցներ մտնելու համար: Պայմանների համար դիմել Баку, Старо Почтовая улица домъ Гаджи Неймата. (ե. հ. շ.) 9—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (1/3 սեպտեմբերի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականի պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեանների, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօ Հերշենրօդերին: (ե. հ. շ.) 14—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1899 թւի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիտղեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (9 22) 15—20

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳՒՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրօսի պահանջ գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վճռեցինք Թիֆլիսում (Հաւլաբարի կամուրջի մօտ, տուն Իսարլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրօսի ամենաընտիր տեսակները: Շնորհիւ այ պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաընտիր պապիրօսներ և ծխախոտ ծախել աւե էժան գներով:

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են՝ Тифлисъ, табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.

Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և շուտ: 5—10

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Августа 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.